ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
ք. Մարալիկ, Մադաթյան փ. 1, հեռ. 0242- 2-22-37, ani.shirak@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 60-Ա

<<28>> սեպտեմբերի 2023 թվականի քաղաք Մարալիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՔԻ ՄԱՐԱԼԻԿ ՔԱՂԱՔԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՊՈՒՐԱԿԻ ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՄԱՍՈՎ ԱՆՑՆՈՂ ՓՈՂՈՑՈՎ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԵՐԹԵԿՈՒԹՅՈՒՆԸ ԱՐԳԵԼԵԼՈՒ ԵՎ ԱՅՆ ՊՈՒՐԱԿԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետի, 18-րդ հոդվածի 1-ին մասի 4.3-րդ կետի դրույթներովով, հաշվի առնելով որ Մարալիկ քաղաքի քաղաքային պուրակի հյուսիսային մասով անցնող փողոցով տրանսպորտային միջոցների երթևեկության կազմակերպումը անվտանգության տեսակետից մեծ վտանգ է առաջացնում քաղաքային պուրակում հանգստացող քաղաքացիների և հատկապես մանկահասակ երեխաների համար, իսկ Նշված փողոցը փակելու արդյունքում չի խաթարվում Հր. Շահինյան-Մադաթյան փողոցները կապող տրանսպորտային միջոցների երթևեկությունը, քանի որ այն իրականացվում է Հաղթանակի փողոցով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու <<Քաղաքացիական պայմանագիր>> կուսակցության <<Անի>> խմբակցության նախաձեռնությամբ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Մարալիկ քաղաքում անցկացված հանրային լսումների արդյունքների վերաբերյալ կազմված 2023 թվականի օգոստոսի 30-ի արձանագրությունը.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին որոշում է՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայքի Մարալիկ քաղաքի քաղաքային պուրակի հյուսիսային մասով անցնող փողոցով արգելել տրանսպորտային միջոցների երթևեկությունը և այն ներառել պուրակի սպասարկման տարածքում:

2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայքի ղեկավար Արման Սարիբեկյանին.

ա) Ապահովել տրանսպորտային միջոցների երթևեկությունը արգելված փողոցի ճանապարհային երթևեկության համապատասխան նշանների տեղադրումը:

3. Որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

	Կողմ- 11	Դեմ – 0	Ձեռնպահ – 0
Ա. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ	----------	----------	----------
Է. ՍԱՂԱԹԵԼՅԱՆ	----------	----------	----------
Ռ. ԱՐՇԱԿՅԱՆ	----------	----------	----------
Է. ՈՒՌՈՒՏՅԱՆ	----------	----------	----------
Ա. ՇԱԲՈՅԱՆ	----------	----------	----------
Հ. ՋԱՏԻԿՅԱՆ	----------	----------	----------
Ժ. ԱԼԵՔՅԱՆ	----------	----------	----------
Գ. ԱՂԱԲԵԿՅԱՆ	----------	----------	----------
Ն. ՍԱՐՈՅԱՆ	----------	----------	----------
Գ. ԹԱԹԵՎՈՍՅԱՆ	----------	----------	----------
Մ. ԵՆՈՔՅԱՆ	----------	----------	----------

ՀԱՅԱՍՏԱՆԻՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Ա. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ**

<<28>> սեպտեմբերի 2023 թ.
քաղաք Մարալիկ